ԲՅՈՒԼԵՏԵՆ

Հոկտեմբեր 2025թ.

ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐ

Հոկտեմբերին գումարվել է Պալատի խորհրդի 1 նիստ՝ 21.10.2025թ.-ին:

21.10.2025թ. նիստի օրակարգում ընդգրկված էր 4 հարց: Նիստի ընթացքում հաստատվել են Պալատի աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորում շնորհելու, Պալատին անդամակցելու համար դիմած ֆիզիկական անձանց Պալատի անդամ ընդունելու, Պալատի ֆիզիկական անձ անդամի և Պալատի անդամ աուդիտորական կազմակերպության անդամակցությունը դադարեցնելու մասին որոշումները:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՆԻՍՏԵՐ

Որակավորման հանձնաժողով

Որակավորման հանձնաժողովը գումարել է 3 նիստ՝ **14.10.2025թ.-ին, 21.10.2025թ.-ին և 30.10.2028թ.-ին,** որոնցում աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորում է շնորհվել 29(քսանինն) անձի և հավանություն է տրվել որոշակի դասընթացներ ՇՄԶ ճանաչելուն:

Անդամակցության հանձնաժողով

Հանձնաժողովը գումարել է 2 նիստ՝ **20.10.2025թ.-ին և 31.10.2025թ.-ին,** որոնցում որոշել է առաջարկել Պալատի խորհրդին՝ հաստատելու 8(ութ) ֆիզիկական անձանց՝ որպես աուդիտոր և փորձագետ հաշվապահ անդամ անդամակցությունը Պալատին:

ՇՄԶ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

03.10.2025թ.-ին տեղի է ունեցել ՇՄԶ- «Ֆինանսական տեխնոլոգիաներ (FINTECH)՝ աուդիտորների և հաշվապահների համար» թեմայով դասընթացը: Այն վարում էր **Ֆլորա Գրիգորյանը**:



13.10.2025թ.-ին տեղի է ունեցել ՇՄԶ- «Ավելացված արժեքի հարկ, հարց և պատասխան» թեմայով դասընթացը: Այն վարում էր **Ասանեթ Ալոյանը**:



21.10.2025թ.-ին տեղի է ունեցել ՇՄԶ- «Աշխատանքային օրենսգրքի ամենակիրառելի կարգավորումները, հարց և պատասխան» թեմայով դասընթացը: Այն վարում էր **Ժորա Սարգսյանը**:



24.10.2025թ.-ին տեղի է ունեցել ՇՄԶ-«Խմբի ֆինանսական հաշվետվությունների աուդիտների հիմնական փոփոխությունները՝ վերանայված ԱՄՍ 6000-ի համաձայն» թեմայով դասընթացը: Այն վարում էր **Ելենա Ադամյանը:**



30.10.2025թ.-ին տեղի է ունեցել ՇՄԶ-«Կրկնակի հարկումը բացառող համաձայնագրերի կիրառումը» թեմայով դասընթացը: Այն վարում էր **Նաիրուհի Ավետիսյանը:**



Պալատի որակավորման դասընթացների մեկնարկ 2025թ.

2025թ. հոկտեմբերի 2-ից Պալատի նոր գրասենյակում տրվեց Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի որակավորման ծրագրի դասընթացների մեկնարկը: Այս իրողությամբ արձանագրվում է Ծրագրի պատմության նոր փուլ՝ նոր հեռանկարներով ու նրանց ապահովման երաշխիքներով: Դասընթացների ավելի քան **560** մասնակիցներ հնարավորություն կունենան բարելավված պայմաններում՝ տեխնիկապես հագեցած և նոր սարքավորումներով համալրված լսարաններում և բարձր որակավորում ունեցող մասնագետների աջակցությամբ հարստացնել իրենց գիտելիքները, ձեռք բերել նոր հմտություններ ու կարողություններ՝ մասնագիտական առաջընթացի և հաջողության կայուն երաշխիքների ապահովման նպատակով:

Հանդիպում Համաշխարհային բանկի ներկայացուցիչների հետ

Ս.թ. հոկտեմբերի 14-ին Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատում տեղի ունեցավ հանդիպում Համաշխարհային բանկի ներկայացուցիչների հետ: Համաշխարհային բանկը հոկտեմբերի 13-24-ը իրականացնում էր Հայաստանի հաշվապահական հաշվառման և աուդիտի ինստիտուցիոնալ շրջանակի գնահատում, որի արդյունքում պատրաստելու և հրապարակելու է Հայաստանում հաշվապահական հաշվառման, աուդիտի ստանդարտների և կանոնների պահպանման վերաբերյալ զեկույց (ROSC):

Հանդիպման նպատակը ՀԲ-ի կողմից իրականացվող գնահատման, միջազգային լավագույն պրակտիկային համապատասխան ֆինանսական հաշվետվությունների և աուդիտի ինստիտուցիոնալ բարելավումների նպատակով առաջարկությունների նախապատրաստման, հետագա անհրաժեշտ աջակցություն տրամադրելու հետ կապված հարցերի քննարկումն էր:
Հանդիպմանը մասնակցում էին Պալատի նախագահ Մանվել Ղազարյանը, Պալատի նախագահի տեղակալ Արթուր Հարությունյանը, Խորհրդի անդամ Հովհաննես Պետրոսյանը, Պալատի որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի նախագահ Դավիթ Եդիգարյանը, գործադիր տնօրեն Հայկ Մնացականյանը, Համաշխարհային բանկի ֆինանսական կառավարման ավագ մասնագետ Գարիկ Սերգեյանը, Համաշխարհային բանկի խորհրդատուներ Դարել Սքոթը, Պասկալ Ֆրեժակը, Մայքլ Ուելսը, Նատալյա Կոնովալենկոն, Արփինե Ղևոնդյանը:

ՀԱԵԽ նիստ

2025թ. հոկտեմբերի 16-ին տեղի ունեցավ Հաշվապահների և աուդիտորների եվրասիական խմբի (ՀԱԵԽ) հերթական նիստը:
Նիստը նախագահում էր Պալատի խորհդի անդամ, ՀԱԵԽ նախագահ Թաթուլ Մովսիսյանը:
Նիստի ընթացքում քննարկվեցին Պրոֆեսիոնալ հաշվապահի մասնագիտական էթիկայի կանոնագրքի փոփոխությունները, ներդրման և կիրառման արդի վիճակը, թվային տնտեսության պայմաններում աուդիտի և հաշվապահական հաշվառման փոխակերպման հանձնաժողովի 2024 թ. գործունեության հաշվետվությունը և 2025 թ. ծրագիրը, ինչպես նաև օրակարգային այլ հարցեր:
ՀԱԵԽ-ի ընդհանուր ժողովին մասնակցում էր նաև Պալատի գործադիր տնօրեն Հայկ Մնացականյանը:

ԵԱՏՄ աուդիտորների Խորհրդատվական մարմնի նախագահության նիստ

2025թ. հոկտեմբերի 20-ին տեղի ունեցավ Եվրասիական տնտեսական միության աուդիտորների Խորհրդատվական մարմնի նախագահության նիստը:
Օրակարգում կառույցի որոշ հանձնաժողովների 2025-2026թթ. գործունեության ծրագրերի քննարկումն էր, Աուդիտորական գործունեության ստանդարտացման և մասնագիտական էթիկայի հանձնաժողովի կազմի փոփոխության հաստատումը, օրակարգային այլ հարցեր:
Նիստին մասնակցում էր նաև Պալատի որկավորման հանձնաժողովի նախագահ Արթուր Հարությունյանը:



Հանդիպում ՀՄԴ ներկայացուցչի հետ

Ս.թ.հոկտեմբերի 14-21-ը Հայաստան էր այցելել Հաշվապահների միջազգային դաշնության անդամակցության պատասխանատու Տանյա Մուսումին: Այցի շրջանակներում Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատում ՀՄԴ ներկայացուցչի հետ տեղի ունեցան բազմաթիվ հանդիպումներ և քննարկումներ ներկայացուցչական բավականին լայն կազմով, օրակարգային հարցերի ընդգրկուն ծավալով և միջոցառումների հագեցած ծրագրով:
Ժամանակահատվածը ներառեց հանդիպումներ Պալատի նախագահ Մանվել Ղազարյանի, գործադիր տնօրեն Հայկ Մնացականյանի, Պալատի խորհրդի անդամներ Թաթուլ Մովսիսյանի, Հովհաննես Պետրոսյանի, Էմիլ Վասիլյանի, Իրինա Գևորգյանի,

Պալատի նախագահի տեղակալ, Որակավորման հանձնաժողովի նախագահ Արթուր Հարությունյանի, Հանձնաժողովի անդամ Մագի Նարգիզյանի, Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի նախագահ Դավիթ Եդիգարյանի, աուդիտորական կազմակերպությունների և Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ներկայացուցիչների հետ:
Նպատակը Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի կարողությունների գնահատումն էր ՀՄԴ լիիրավ անդամակցության ճանապարհին:
Հանդիպումների և քննարկումների ընթացքում ներկայացվեցին ոլորտի զարգացումները, մասնավորապես ՀՄԴ անդամակցությամբ Պալատի ստանձնած պարտավորությունների կատարման, մասնագիտական միջազգային ստանդարտների թարգմանության և ընդունման, միջազգային կրթական ստանդարտներին համապատասխան որակավորման գործընթացի զարգացման ուղղությամբ կատարված քայլերը, առկա ձեռքբերումները, խնդիրներն ու ծրագրերը:
Այցի ընթացքում ՀՄԴ ներկայացուցիչը մասնակցեց նաև Կենտրոնական բանկի կողմից կազմակերպված Կայուն զարգացման քաղաքականությանը նվիրված կոնֆերանսին:

Այսօր ուսանող, վաղը՝ որակավորված մասնագետ

Ս.թ. հոկտեմբերի 28-ին Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատում տեղի ունեցավ Պալատի նախագահ Մանվել Ղազարյանի և գործադիր տնօրեն Հայկ Մնացականյանի հանդիպումը Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի հաշվապահական հաշվառում և աուդիտ մասնագիտության ուղին ընտրած տարբեր կուրսերի մոտ 50 ուսանողների և աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորում ստացած մասնագետների հետ:

Այս անգամ նախաձեռնվել էր այլ՝ համատեղ ձևաչափով հանդիպում, որպեսզի ուսանողները շոշափելի ու իրական տեսնեն իրենց վաղվա օրը որպես ապագա որակավորված մասնագետների, ծանոթանան այն ուղուն, որը պետք է անպայման անցնել պրոֆեսիոնալ մասնագետ դառնալու ճանապարհին:
Միջոցառման արդյունքում ուսանողները հնարավորություն են ունեցել ծանոթանալու մասնագիտական որակավորման գործընթացին և իրենց ապագա դերին ոլորտում, ավելի սերտ կապ է հաստատվել Պալատի և ՀՊՏՀ ուսանողների միջև ապագա համագործակցության և մասնագիտական զարգացման նպատակով, 18 մասնագետներ ստացել են աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորման վկայական: